## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 133.4. ~~Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի~~ Մրցակցության եւ սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի նախագահի հաղորդումը ներկայացնելը և քննարկելը**

1. ~~Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի~~ Մրցակցության եւ սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի նախագահը յուրաքանչյուր տարի՝ մինչև մայիսի 1-ը, Ազգային ժողով է ներկայացնում հաղորդում Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախորդ տարվա գործունեության մասին:

2. Ազգային ժողովի նիստում հաղորդումը քննարկվում է Կանոնակարգի 126-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով՝ ~~Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի~~ Մրցակցության եւ սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ:

***(133.4-րդ հոդվածը լրաց. 04.12.24 ՀՕ-481-Ն)***